ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՆՈՐՎԵԳԻԱ

Օսլոյի Ժողովրդական Թանգարանի տնօրինության, Նորվեգիայի Եկեղեցու և Ս. Գրոց Ընկերության միասնական հրավերով, հոկտեմբերի 9-ին Օսլո ժամանեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությանն ուղեկցում էին Ավստրիայի և Սկանդինավյան երկրների Հայոց թեմի Առաջնորդ Մեսրոպ Արք. Գրիգորյանը և գավազանակիր Կարապետ Աբղ. Հարությունյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԼՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԴԱՍԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 10-ին, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը իր առաջին հանդիպումը ունեցավ Նորվեգիայի Լութերական Եկեղեցու Պետ Անդրեաս Աարֆլոտ Եպիսկոպոսի հետ, որին ներկա էին Նորվեգիայի տասնմեկ թեմակալ առաջնորդները: Առավոտյան ժամերգությունից հետո Աարֆլոտ Եպիսկոպոսը ջերմորեն ողջունեց Վեհափառ Հայրապետին, որից հետո ներկաներին եղբայրական սիրո խոսք ուղղեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետը խոսեց Հայ Եկեղեցու, Մայր Հայաստանի և հայ ժողովրդի ներկա իրավիճակի մասին: Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Աարֆլոտ Եպիսկոպոսին նվիրեց ականակուռ լանջախաչ և իր հեղինակած գրքերից:

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄԸ ՕՍԼՈՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 10-ին, ժամը 12-ին, տեղի ունեցավ Ֆրիտյոֆ Նանսենի ծննդյան 135-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման հանդիսավոր արարողությունը: Թանգարանի Հանձնախմբի ատենապետ Պիտեր Բոտենշոն ողջունեց Վեհափառ Հայրապետի գալուստը և շնորհակալություն հայտնեց հրավերն ընդունելու համար: Ողջույնի խոսքով հանդես եկան «Սաթ Սեյփիրնթ»

կազմակերպության ատենապետ Պեր Թրոն, Ֆրիտյոֆ Նանսենի անվան ինստիտուտի ատենապետ Յոհան Հորթեն: Հատուկ խոսքով հանդես եկավ Նորվեգիայի Մշակույթի Նախարար Ասե Կլևլանդը: Ելույթից հետո Տիկ. Կլևլանդը Վեհափառ Հայրապետին հրավիրեց իր պատգամը տալու ներկաներին: Շնորհակալություն հայտնելով հրավերի համար, Նորին Սրբությունն ասաց. «Ես չէի կարող չընդառաջել ձեր հրավերին և այսօր ներկա չլինել այստեղ և ողջ Հայ Եկեղեցու երախտագիտության կենդանի արտահայտությունը չհաղորդել իմ ներկայությամբ և մասնակցությամբ: Ֆրիտյոֆ Նանսենը ձեզ համար եղել է մեծ գիտնական, բևեռախույզ ռահվիրա, կենդանաբան, օվկիանոսագետ, ազգային գործիչ, գրող, արվեստաբան, իսկ մեզ՝ հայերիս համար նա եղել է արդարության քարոզիչը և պաշտպանը: Հազարավոր գաղթական հայերի համար Նանսենը եղել է հույսի աղբյուր և փրկության ապավեն, Ազգերի Լիգայի մեջ հայության դատի ջատագովը, Նանսենյան Անձնագրի հեղինակ, Հայաստանի մեծ բարեկամ: Մենք չենք կարող մոռանալ, որ մեր արդի պատմության մեջ նա եղել է հազարավոր հայերի քաղաքացիական ինքնուրույնություն տվող անձնավորություն, երբ այդ հայերը բռնությամբ զրկվել էին իրենց քաղաքացիական հայրենի իրավունքից և չէին կարողացել ունենալ ուրիշ քաղաքացիություն օտար աշխարհների մեջ: Նանսենը, ինչպես դանիացի Մարիա Յակոբսոնը, Քարեն Եփփեն, գերմանացի Յոհաննես Լեփսիուսը, ամերիկացի Վուդրո Վիլսոնը, ֆրանսիացի Կլեմանսոն, անգլիացի Գլադստոնը, ավստրիացի Ֆրանց Վերֆելը և նման ուրիշ անձեր, այլևս մաս են կազմում Հայաստանի ժողովրդի և նրա պատմության: Նրանք այժմ ճանապարհացույց ուղենիշներ են, փարոսներ, որոնք կյանքի ուղղությունն են ցույց տալիս:

Ես այսօր գալիս եմ ոչ այն Հայաստանից, որն այցելել է Ֆրիտյոֆ Նանսենը 1925 թվականին, երբ Հայաստանը գտնվում էր խորհրդային կարգերի տակ և Մոսկվայի ճնշման ներքո, այլ գալիս եմ այն Հայաստանից, որն այժմ հինգ տարիներ ի վեր վերապրում է դարերով երազած անկախության նոր շրջանը: Ես գալիս եմ ձեզ ոչ այն ժողովրդից, որ գաղթականության ցուպն ուներ իր ձեռքին և անհույս, անորոշ, անստույգ ապագայի մղձավանջն էր ապրում իր կյանքում, այլ այն ժողովրդից, որ վերականգնման ու վերածաղկումի շրջան կապրի և հուսալից հայացքով կգնա դեպի առավել պայծառ ապագա:

Ահա, Հայաստանի և արտասահմանի այդ հայ ժողովրդի անունից ես խոնարհվում եմ Ֆրիտյոֆ Նանսենի փրկավետ գործին և օրհնում եմ նրա անմեռ հիշատակը: Փառք եմ տալիս

Աստծուն, որ նրա նման վավակ է շնորհել Նորվեգիայի ժողովրդին, որի բարիքները վայելել են այնքան ապգեր, նրանց շարքում՝ հայ ժողովուրդը»:

Ավարտելով խոսքը, Վեհափառ Հայրապետը թանգարանին նվիրեց Ֆրիտյոֆ Նանսենի յուղաներկ դիմանկարը և «Խորհրդային Հայաստանի» 1925 թվականի հունիսի այն համարը, որտեղ, առաջին էջի վրա, լուսանկարներով հոդված էր տպվել մեծ հայաների Հայաստան ժամանման կապակցությամբ:

Վեհափառ Հայրապետը Օսլոյի ժողովրդական թանգարանի ցուցահանդեսում ընկերակցությամբ Մեսրոպ Արք. Գրիգորյանի և թանգարանի տնօրեն Էրիկ Ռուդենկի

Թանգարանի տնօրեն Էրիկ Ռուդենկը, շնորհակալությամբ ընդունելով նվերը, Վեհափառ Հայրապետին հրավիրեց կտրելու ժապավենը և առաջնորդեց թանգարանի ընդարձակ սրահները՝ ծանոթանալու Ֆրիտյոֆ Նանսենի կյանքն ու գործունեությունը ներկայացնող վավերագրերին ու իրերին:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՏՈՒՆ

Ցուցահանդեսին ծանոթանալուց հետո, ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց այն տունը, ուր ապրել ու գործել էր Ֆրիտյոֆ Նանսենը և որն այժմ վերածվել էր ընկերաբանական քաղաքական հետազոտությունների կենտրոնի՝ «Ֆրիտյոֆ Նանսենի Ինստիտուտ» անվամբ:

Ինստիտուտի գիտաշխատողները Վեհափառ Հայրապետին ծանոթացրեցին հաստատության բաժինների գործունեությանը. առաջնորդեցին Նանսենի աշխատասենյակ, որը պահպանվել էր այնպես, ինչպես գիտնականի կենդանության օրերին էր: Վեհափառ Հայրապետի առաջին այցելությունը չէր սա, այս տանը նա եղել էր նաև 1968 թ., երբ դեռ եպիսկոպոս էր Կիլիկյան Աթոռում: Նորին Սրբությունը ողջունեց և շնորհակալություն հայտնեց աշխատակիցներին՝ նրանց կատարած օգտաշատ գործի համար:

Ապա Վեհափառ Հայրապետը հոգեհանգստյան արարողություն կատարեց հաստատության բակում հանգչող մեծ հումանիստի շիրմին:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅՈՒՆ

Կեսօրից հետո Վեհափառ Հայրապետին դարձյալ առաջնորդեցին Ֆրիտյոֆ Նանսենի ցուցահանդես: Այստեղ հավաքվել էին մեծ թվով այցելուներ: Դիմելով ներկաներին, Վեհափառ Հայրապետը կոչ արեց երիտասարդ սերնդին՝ վերարժևորելու Նանսենի գաղափարը, ոգին, նվիրումը, արժանին մատուցել նրա հիշատակին: Նորին Սրբությունը նշեց, որ անհրաժեշտ է նոր հարաբերություններ ստեղծել Հայ և Նորվեգական Եկեղեցիների, Հայաստանի և Նորվեգիայի միջև, որպեսզի առավել ևս ամրանա այն բարեկամությունը, որը ստեղծվել է երկու ժողովուրդների միջև՝ հայ ժողովրդի տառապանքի ու աքսորի տարիներին: Վեհափառ Հայրապետը ողջունեց Նորվեգիայի Պետության բերած նպաստը Հայաստանին՝ հատկապես երկրաշարժի ծանր օրերին և դրանից հետո:

Նախօրոք իմանալով, որ ներկաների մեջ կան նաև հայազգի կավակներ, Նորին Սրբությունը նրանց հայերեն կոչ ուղղեց՝ պատգամելով հաճախ այցելել այս թանգարան և հաղորդ մնալ հայ-նորվեգական բարեկամության ոգուն: «Երբ հայ հյուրեր այցելեն ձեզ, բերեք նրանց այստեղ որպես մի ուխտավայր», ամփոփեց Վեհափառ Հայրապետը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՍԵ ԿԼԵՎԼԱՆԴԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 10-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկժամյա տեսակցություն ունեցավ Նորվեգիայի Մշակույթի նախարար տիկ. Ասե Կլևլանդի հետ: Զրույցի

ընթացքում խոսվեց հոգևոր արժեքների վերագնահատման, վերարժևորման, վերակենսավորման հարցերի շուրջ: Նորին Սրբությունն ու տիկ. Կլելանդը անհրաժեշտ համարեցին Նորվեգիայի և Հայաստանի միջև մշակութային ամուր և աշխույժ գործակցության իրականացումը, որի ընթացքում երկուստեք կծանոթանան երկու երկրների ազգային մշակույթներին:

Վեհափառ Հայրապետը մանրամասն տեղեկություններ հաղորդեց Հայաստանի թանգարանների անբավարար վիճակի մասին և առաջարկեց նորվեգացի մասնագետներ հրավիրել Հայաստան՝ իրավիճակին ծանոթանալու և անհրաժեշտ եզրակացություն անելու նպատակով: Տիկ. Կլելանդը, շահագրգռություն ցուցաբերելով, ողջունեց Վեհափառ Հայրապետի առաջարկը:

Խոսակցության ավարտին փոխանակվեցին հուշանվերներ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ

Նույն օրը իր Արքայական Պալատում Նորվեգիայի Հերալդ թագավորն ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսին:

Նորին Վեհափառությունը հետաքրքրվեց Հայաստանի և Հայ Եկեղեցու ներկա կացությամբ: Վեհափառ Հայրապետը, փոխանցելով Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ողջույնները, Նորվեգիայի թագավորին տեղեկացրեց Հայաստանի և մասնավորապես Հայ Եկեղեցու ներկա վիճակին և կյանքին: Ապա կրույցն ընթացավ տնտեսական, մշակութային և հոգևոր ասպարեզներում փոխադարձ գործակցության շուրջ:

Հերալդ թագավորը, իր համակրանքն արտահայտելով Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ, նշեց, որ նանսենյան ավանդները բնականորեն իրենց արտացոլումը կգտնեն նաև մեր օրերում:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը Նորվեգիայի թագավորին նվիրեց Կարագյանի վրձնին պատկանող «Ս. Արարատ» յուղաներկ պատկերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 11-ին, ժամը 12-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը մեկժամյա հանդիպում ունեցավ Նորվեգիայի Արտաքին գործոց նախարար Թորե Կոդալի հետ: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ու պրն. Կոդալը անդրադարձան Նանսենյան ժամանակի Հայաստանին: Մեկ անգամ ևս բարձր գնահատանքի խոսք ասելով Նանսենի մարդասիրական գործունեության մասին, Վեհափառ Հայրապետը երախտագի-

տությամբ նշեց, որ մեծ հայասերի թողած ավանդը նոր ուժով դրսևորվեց 1988 թ. երկրաշարժից հետո, երբ Նորվեգիայի պետությունը և Եկեղեցին կառուցեցին մի ամբողջ թաղամաս և մի հիվանդանոց՝ Ֆրիտյոֆ Նանսենի անվամբ: Նորին Սրբությունը նշեց, որ ներկա օրերում Հայաստանի պետությունը իր գործունեությունը կենտրոնացնելու է մասնավորապես կարգացողական ծրագրերի վրա: «Այժմ շտապ օգնությունից առավել կարևոր է գործառնական, արտադրողական պայմանների կարգացումը», ասաց Վեհափառ Հայրապետը:

Պրն. նախարարն իր հերթին ամբողջական պատկերացում տվեց Նորվեգիայի պետական կառուցվածքի, նրա կողմից իրականացվող արտաքին քաղաքականության մասին և ցանկություն հայտնեց քննարկելու կարգացողական բնույթ կրող ծրագրերը՝ կարելի օժանդակություն ընձեռելու նպատակով:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հոկտեմբերի 11-ին Վեհափառ Հայրապետը ճաշի հյուրը եղավ Նորվեգիայի Լութերական Եկեղեցու Պետ Անդրեաս Սարֆլոտ Եպիսկոպոսի: Ներկա էին նաև Ս. Գրոց Ընկերության ընդհանուր քարտուղար Վերապատվելի Օլե Քվարմեն և Նորվեգիայի Եկեղեցու Էկումենիկ և Միջեկեղեցական հարաբերությունների բաժանմունքի վարիչ տիկ. Մարգուն Սանդալը:

Ճաշի սեղանի շուրջ ծավալվեց աշխույժ զրույց, որի ընթացքում քննարկվեցին Հայ Առաքելական և Նորվեգիայի Լութերական Եկեղեցիների հարաբերություններին առնչվող հարցեր: Վեհափառ Հայրապետը մանրամասնորեն բացատրեց Հայ Եկեղեցում տիրող իրավիճակը՝ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում՝ մասնավորապես կարևորելով քրիստոնեական առողջ դաստիարակության, հոգևորականների նոր սերնդի պատրաստության, նոր եկեղեցիներ կառուցելու և հների վերանորոգման խնդիրները: Սարֆլոտ Եպիսկոպոսը և նրա ընկերակիցները, ուշադրությամբ լսելով Նորին Սրբությանը, իրենց կորակցությունը հայտնեցին այդ ծրագրերի իրականացմանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ Ս. ԳՐՈՑ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն այցելեց նաև Նորվեգիայի Ս. Գրոց Ընկերության կենտրոնատեղի:

Կազմակերպության աշխատակիցները Նորին Սրբությանը ծանոթացրեցին իրենց ծավալած գործունեությանը: Ի դեպ, Նորվեգիայի Ս. Գրոց Ընկերության ներկայացուցիչները, Վերապատվելի Քվարմեի գլխավորությամբ, այս տարվա ապրիլին եղել էին Հայաստանում՝ Ս. Գրոց Ընկերության Կենտրոնի բացման առիթով: Նրանք իրենց գոհունակությունը հայտնեցին Հայաստանում կատարված աշխատանքների կապակցությամբ: Զրույցի ընթացքում քննարկվեցին Ս. Գրքի տարածման առավել արդյունավետ ուղիներ որոնելու և համագործակցության հեռանկարային ծրագրերին առնչվող հարցեր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻ ԵՎ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հոկտեմբերի 11-ի երեկոյան Վեհափառ Հայրապետը եղավ Օսլոյի Սարկավագների և Ընկերային Ծառայողների Համալսարանի ռեկտոր Գեոլ Նորպակի ընթրիքի հյուրը: Պրն. Նորպակը Նորին Սրբությանը հանգամանորեն ներկայացրեց Համալսարանում գործող բաժինների աշխատանքներին: Նա նշեց, որ Սարկավագությունը Նորվեգիայի Եկեղեցու մնայուն և կարևոր բաժիններից է, որն իրականացնում է ծերանոցներում և հիվանդանոցներում հաշմանդամների խնամքի ու աջակցության կազմակերպումը:

Վեհափառ Հայրապետն իր հերթին ներկայացրեց Հայ Եկեղեցու կողմից իրականացվող ընկերային ծառայությունները և ցանկություն հայտնեց, որ փոխադարձ այցելությունների միջոցով փորձի ու գիտելիքների փոխանակում լինի:

ՃԱՇ-ՀԱՆԴԻՊՈՒՄ ԷԿՈՒՄԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 12-ին Վերապատվելի Քվարմեի կողմից, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Օսլոյի Ժողովրդական Թանգարանի հատուկ մի սրահում կազմակերպվել էր ճաշկերույթ, որին ներկա էին նաև պետական միջհարաբերական էկումենական տարբեր կազմակերպությունների 24 ներկայացուցիչներ: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը խոսեց Հայ Եկեղեցու առջև ծառացած խնդիրների շուրջ և կարևորեց միջեկեղեցական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը:

Ս. ՊԱՏԱՐԱԳ ՕՍԼՈՅԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՔԱՐՈԶ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ

Հոկտեմբերի 13-ին, կիրակի օրը, Օսլոյի Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը հրավիրվեց իր պատգամը տալու ներկաներին:

Վեհափառ Հայրապետը իր քարոզում նշեց, որ հոկտեմբեր ամիսը հայ ժողովրդի կյանքում ընկալվում է որպես «Մշակույթի ամիս»:

«Հոկտեմբերին Հայ Եկեղեցին տոնում է իր թարգմանչաց հիշատակը: Մեր մշակույթը սկսվեց Ս. Գրքով, - ասաց Նորին Սրբությունը:- Աստծու խոսքը, Ս. Գրքով արտահայտված և Քրիստոսով մարմնավորված, խմորել է մեր ողջ հայ գրականությունը: Մեր օրերում, երբ նյութականը սկսում է ճնշել հոգևորի վրա, անհրաժեշտություն է զգացվում վերակենդանացնել հոգևոր և բարոյական արժեքների գիտակցությունը ընկերային կյանքի մեջ»:

Անդրադառնալով Ֆրիտյոֆ Նանսենի հիշատակին, Նորին Սրբությունն ընդգծեց, որ նրա գործն ու կյանքը օրինակ պետք է հանդիսանան նոր սերնդի համար:

«Մենք բոլորս անցնում ենք պատմության գանձանակի առջևից,- շարունակեց Նորին Սրբությունը,- ինչպես այսօր հիշվեց Ավետարանում Հիսուսի կյանքի այն դրվագը, որտեղ նկարագրված է Երուսաղեմի Տաճարի մուտքի գանձանակի առջևից անցնող այրի կնոջ լումայի պատմությունը: Մեր հայ ժողովուրդը իր ողջ ունեցվածքը դրեց այդ գանձանկի մեջ՝ իր արյունը, իր մարտիրոսությունը, իր գրականությունը, իր արվեստը, մշակույթը: Բոլոր քրիստոնյաները այս ժամանակներում հարկ է, որ այդ գանձանակի առջևից անցնեն՝ ձեռք-ձեռքի տված, սիրտ-սրտի կապած և այնտեղ դնեն իրենց միասնությունը և համագործակցությունը»:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը իր հայրապետական օրհնությունը շնորհեց ներկաներին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ Ս. ԳՐՈՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՌՈՒՄ

Նորվեգիայի փոքրաթիվ հայ համայնքի անդամները, Շվեդիայի Ուփսալա քաղաքի Հոգևոր Հովիվ Տ. Սարգիս Քհն. Մելքոնյանի գլխավորությամբ, հավաքվել էին Ս. Գրոց Ընկերության մատուռում, ուր մատուցվելու էր Ս. Պատարագ՝ հայկական

ծեսի համաձայն: Պատարագը մատուցեց Ավստրիայի և Սկանդինավյան երկրների Հայոց թեմի առաջնորդ Մեսրոպ Արք. Գրիգորյանը:

Ս. Պատարագի ընթացքին ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունն անցյալի վկայակոչմամբ հորդորեց հայորդիներին, որպեսզի նրանք հավատարիմ մնան Ս. Լուսավորչի և Ս. Մեսրոպի հավատքին ու գրին, կյանքով ու գործով իրենց նպաստը բերեն Մայր Հայրենիքին ու ժողովրդին:

Բոլոր հավատացյալները Ս. հաղորդություն ստացան:

Հայ Համայնքի Մշակութային Միության անդամները, Պատարագի սրբական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետին հրավիրեցին ընթրիքի, որի ընթացքում Վեհափառ Հայրապետի և ներկաների միջև ծավալվեց ջերմ զրույց:

Վերջում Նորին Սրբությունը հուշանվերներ բաժանեց նրանց:

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածին վերադարձավ հոկտեմբերի 16-ին: Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես Արք. Պոլատյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին Արք. Ներսիսյանը, Կրոնի գործոց պետական կոմիտեի նախագահ Լևոն Սուրյանը, բարձրաստիճան այլ հոգևորականներ և պաշտոնյաներ:

ԿԱՐԱՊԵՏ ԱԲՂ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ